խաղալով ի վերայ ծովուն՝ եկեալ ի վերայ Տաճկին, այնպէս արարեալ զսոցա երամքն որպէս զանապատ, զոմանս այրեալ և հրդեհեալ և զոմանս ի ծովն ջրասոյզ արարեալ և գնացսն ի միջի յերկուս կտրեալ եւ զայլսն առ ինքն տարեալ՝ մինչև Ծ նաւից կամ Կ-ից ողջամբ հանդերձ պատերազմի զգեստուն[1]) եւ անթիւ արծաթիւն(*), զկարասիս սոցա և զկահս նաւիցն և զանհամար արս սոցա հանդերձ մեծամեծօք եւ չորպաճիւք եւ յէնկիչէրօք։ Եւ զգերիս սոցա, որք էին քրիստոնեայք յազգէն Ռուզաց ի նաւի անդ կապանօք երկաթի զօրհանապազ զամենայն աւուրս կենաց իւրեանց, նոցա չուխայս զգեցուցեալ եւ հանդերձս մեծագոյնս, եւ զսոցա յէնկիչէրին և զայլ մեծամեծսն որ գնացեալ եղեն աստի, զոսքա ի տեղս Ռուզաց որք կային նոքա գերիք և երկաթի կապանօք ի ձեռս սոցա չարչարանօք վասն Քրիստոսի Կ ամաց և Զ ամաց եւ որք Ծ ամաց սպիտակ ալեօք՝ յորմէ հետէ ըմբռնեալ էին եւ ըմբռնեն, զայլս նոցա ածիլեն։ Եւ յայսմ ամի Ստեղծօղն մեր հանգոյց զնոսա աստի չարչարանաց եւ անդ առնելոց են զպսակն կենաց ի Քրիստոսէ Աստուծոյն մերմէ։ Եւ զայս բանքս լըւեալ թագաւորին՝ ի լաց էր եւ յաղաղակ եւ առ հասարակ ազգ սոցա ի սուգ էր եւ ի տառապանս։

Շաբաթ օր (21 Յ--նի-) տօն Լուսաւորչին մերոյ Սրբոյն Գրիգորի գլուխ նշխարացն։ Մարտիրոս վարդապետն ի Լուսաւորիչ գնաց։

Կիրակի օր (22 Յ--նի-) Տէր Յովանէսն Սուրբ Նիկողոսու զորդին կարգեց. և երեկոյիս ի Ղալաթա գնացի. Խօճա Մկրտիչն զորդին կարգեց։

1) *սգեստովն.*

(*) **Լուս.** *ԺԳ կտոր պրծեալ միայն։*